# Արձանագրություն N 2

## ՀՀԿԱ-ՊԸԾՁԲ-17/20 ծածկագրով պարզեցված ընթացակարգով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստի

ք.Երևան
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1,
ՀՀ կառավարության աշխատակազմի
վարչական շենք, ս/հ 19տնտ.

23 մարտի 2017թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի

| | |
|---|---|
| նախագահ (ԳԱՊ)՝ | Աշոտ Գրիգորյան |
| գնահատող անդամներ (ԳԱ)՝ | Աշոտ Ավետիսյան |
| բացող անդամներ (ԲԱ)՝ | Լիլիթ Մաղդեսյան |
| | Դավիթ Գրիգորյան |
| քարտուղար՝ (ՄՀմ) | Հայկ Խաչատրյան |

<u>Հայտերի բացման արդյունքների մասին</u>

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ 3,000,000 ՀՀ դրամ:

Գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանը ներկայացրեց բացման ենթակա հայտերի ցուցակը, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատեց իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնված հայտերի բացման մասին արձանագրությունը (Համակարգում՝ հաշվետվություն) կցվում է սույն արձանագրությանը:

Հայտ ներկայացրել է միայն ՀԷՔՍ ՍԻՍԹԵՄՍ ՍՊԸ-ն:

Մասնակցի կողմից ներկայացված գնի առաջարկը՝

| Գնի առաջարկները առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ | |
|---|---|
| Անվանումը | «ՀԷՔՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ |
| տվյալների ցանցի կառավարման և օժանդակման ծառայություններ | **2,400,000** |

<u>Մասնակցի հայտի գնահատում</u>

Մասնակցի.

- հայտը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան.
- բացված հայտում հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը առկա են.
- ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան.

- հայտը գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից գնահատվում է բավարար:

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

1. ՀՀԿԱ-ՊԸԾՁԲ-17/20 ծածկագրով պարզեցված ընթացակարգով գնում կատարելու ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել «ՀԷՔՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ -ին:

*Կողմ՝ 2, դեմ՝ 0*

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել նույն վայրում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացությունը ստանալու հաջորդ աշխատանքային օրվա ժամը 11:30-ին, բայց ոչ ուշ քան 2017թ.-ի մարտի 29-ը:

*Կողմ՝ 2, դեմ՝ 0*

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ ______ Աշոտ Գրիգորյան

գնահատող անդամ (ԳԱ)՝ ______ Աշոտ Ավետիսյան

բացող անդամներ (ԲԱ)՝ ______ Լիլիթ Մաղդեսյան

______ Դավիթ Գրիգորյան

քարտուղար՝ (ՄՀմ) ______ Հայկ Խաչատրյան